ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.648-Ն որոշման հավելվածի 3-րդ և 44-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.71՝ 65.9 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21072015-01-0088 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Արամ Ասատրյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.71՝ 65.9 քմ մակերեսով բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի լարային խմբի կոնցերտմայստեր Արամ Ասատրյանին:

Արամ Ասատրյանը ծնվել է 1970 թվականին Երևանում: Երաժշտական կրթությունը ստացել է Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում, այնուհետև Ռ.Մելիքյանի անվան ուսումնարանում՝ ջութակի դասարանում: Հետագայում, ընդունվել է Երևանի պետական կոնսերվատորիա՝ ստանալով երկու մասնագիտություն՝ սոլո ջութակ և կամերային երաժշտություն: Այսօր հանդես է գալիս Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբում՝ որպես լարային խմբի կոնցերտմայստեր և զուգահեռ իրականացնում է նաև կրթական գործունեություն՝ դասավանդելով Երևանի պետական կոնսերվատորիայի լարային և կամերային ամբիոններում:

Արամ Ասատրյանը 2013 թվականին հիմնադրել է Էդ. Միրզոյանի անվան քառյակը, որի կազմում 1-ին ջութակն է: Նա բազմաթիվ հայրենական և միջազգային մրցույթների մասնակից է, ստացել է բազմաթիվ մրցանակներ՝ 1997թ Իտալիայում կայացած Վալենտինո Բուկիի անվան միջազգային մրցույթ, 2014թ Գյումրիում «Ռենեսանս» միջազգային մրցույթ փառատոն, 2014թ. Ռուսաստանի Դաշնության Կալուգա քաղաքում տեղի ունեցած 21-րդ դարի կոմպոզիտորների միջազգային մրցույթ: Արամ Ասատրյանը 2016 թվականին պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով: Վերջինս նվագախմբի կազմում հյուրախաղերով հանդես է եկել աշխարհի բազմաթիվ երկրներում և իր ելույթներով միշտ արժանանում է հայ և օտարազգի ունկնդիրների բարձր ու ջերմ գնահատականներին, ինչի արդյունքում ստանում է արտերկրում համագործակցության բազմաթիվ հրավերներ:

Կարևորելով Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կազմում Արամ Ասատրյանի հանդես գալու անհրաժեշտությունը՝ բնակարանային պայմաններ ապահովելու նպատակով միջնորդություն է ներկայացրել նաև նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանը:

Ներկայումս Արամ Ասատրյանն ապրում և ստեղծագործում է Էստոնական փողոցի հ.7 շենքի հ.41 հասցեում գտնվող վարձակալած բնակարանում և, ցավոք, ունի բնակարանային պայմանների խիստ կարիքավորություն:

Հաշվի առնելով բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտությունը՝ Երևանում, ստեղծագործելու համար նպաստավոր պայմաններ ապահովելու նպատակով մշակվել է ավագանու որոշման այս նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ